ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-25/119 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների («Ռուսաց լեզու 2») գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 25.07.2025թ. ժամը 12:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Թամարա Սարգսյան

Հանձնաժողովի անդամ՝ Մերի Մուրադյան

Կարինե Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-25/119** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ	lasprintllc@gmail.com
2	«Մոնոպրինտ» ՍՊԸ	-
3	«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ	bghda88@gmail.com

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Գնառաջարկներ						
Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	ԼԱՍ ՊՐԻՆՏ ՍՊԸ	25000000	16695000	20034000	
1	2	Մոնոպրինտ ՍՊԸ	25000000	17164000	20596800	
1	3	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	25000000	18000000	21600000	

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 «Լաս պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «Լաս Պրինտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «Մոնոպրինտ» ՍՊԸ-ի և «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին.

7.1 Հրապարակել պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Թամարա Սարգսյան /նախագահ/

---------- Մերի Մուրադյան

---------- Կարինե Բաբայան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/